<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ Մարիամ Դարչինյան

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ՝ <<ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շենավանի <<Արեգակ>> մանկապարտեզ>> ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

2. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

4. Եզրակացություն

4. Գրականություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սաների ինքնուրույնությունը դրսևորվում է դերախաղերի ժամանակ՝ դերակատարումների միջոցով, խաղարկելով կարևորել հոգատարությունը այլ երեխաների նկատմամբ (բժիշկ-բժիշկ, տուն-տունիկ, հիվանդանոց)։ Դերախաղերի միջոցով երեխաները կարողանում են խնամել մեկը մյուսին, ուղղորդել՝ ինքնուրույն հոգալու և խնամելու սեփական անձը։

Ինքնուրույն առարկայական գործողությունների արդյունքում երեխան վերնագրելով և շնչավորելով առարկաները՝ զարգացնում է իր ինքնուրույնությունը։ Ստեղծագործական ունակությունը սաների մոտ զարգանում է նաև կերպարվեստի միջոցով։ Նկարչության միջոցով երեխան արտահայտվում է ստեղծագործում, երևակայում։ Նկարելուց հետո սաները պատմում են իրենց նկարածը, հորինում պատմություն, ապա վերնագրում նկարը։ Երեխաները հաճախ նկարում են ձեռքի ափերով և մատներով, որը զարգացնում է նրանց երևակայությունը։ Երեխաները երևակայությամբ նկարում են ամեն ուր՝ ավազի վրա, գրատախտակի, փայլաթիթեղի, թղթի։ Երեխաները ստեղագործում են նաև ապլիկացիայի միջոցով։

Սանների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Ինքնուրույնությունը՝ դրսևորվում է երեխայի գործողություններում արդեն 3-4 տարեկանում։ Ինքնուրույն անհատի ձևավորումը սկզբնական փուլն է։ Ինքնուրույնանալով երեխան դառնում է անկախ։ Իր գործողություններում երեխան դառնում ինքնասպասարկող։ Երեխան ինքնուրույն սկսում է հոգալ իր կարիքները։ Լվացվում է, սանրվում, հագնվում-հանվում, սնվում։ Ինքնուրույնությունը դրսևորվում է նաև պարապունքների ընթացքում։ Երեխան մասնակցում է կերպարվեստի պարապունքների իր կարողությունների սամանում առանց դաստիարակի օգնության, գովերգի արժանանում է յուրաքանչյուր երեխա։ Ինքնուրույնությունը դրսևորվում է նաև մյուս պարապունքների ընթացքում։ Անհատի ինքնուրույնության հասնում է քայլ առ քայլ։

Նախադպրոցական տարիքում առաջնային է համարվում խաղային գործունեության նշանակությունը սանի կյանքում։

Ինքնուրույնությունը նպաստում և դրսևորվում է աշխատանքային գործունեության ընթացքում՝ առարկա-խաղալիք։

Ինքնուրույն առարկայական գործողությունների արդյունքում երեխան վերնագրելով և շնչավորելով առարկաները՝ զարգացնում է իր ինքնուրույնությունը։ Ստեղծագործական ունակությունը սաների մոտ զարգանում է նաև կերպարվեստի միջոցով։ Նկարչության միջոցով երեխան արտահայտվում է ստեղծագործում, երևակայում։ Նկարելուց հետո սաները պատմում են իրենց նկարածը, հորինում պատմություն, ապա վերնագրում նկարը։ Երեխաները հաճախ նկարում են ձեռքի ափերով և մատներով, որը զարգացնում է նրանց երևակայությունը։ Երեխաները երևակայությամբ նկարում են ամեն ուր՝ ավազի վրա, գրատախտակի, փայլաթիթեղի, թղթի։ Երեխաները ստեղագործում են նաև ապլիկացիայի միջոցով։

Սաների ինքնուրույնությունը դրսևորվում է դերախաղերի ժամանակ՝ դերակատարումների միջոցով, խաղարկելով կարևորել հոգատարությունը այլ երեխաների նկատմամբ (բժիշկ-բժիշկ, տուն-տունիկ, հիվանդանոց)։ Դերախաղերի միջոցով երեխաները կարողանում են խնամել մեկը մյուսին, ուղղորդել՝ ինքնուրույն հոգալու և խնամելու սեփական անձը։

Ինքնուրույնության նախաձեռնողականության ունակություններ երեխաների մոտ ձևավորվում են նաև կենցաղում, և երեխան ձեռք է բերում ինքնասպասարկման հմտություններ։

Դայակի օգնությամբ դասավորում է նախաճաշի, ճաշի և հետճաշի սեղանների սպասքը, կառողանում է բացել անկողինը, հագել և հարթել անկողինը, ինքնուրույ հանվել և հագնվել, ճիշտ կապել կոշիկների ամրակները։ Կարողանալ լվանալ ատամները, լվացվել, սանրել մազերը, այս ամենին հասնում է ցուցադրելով և քննարկելով թեմատիկ համապատասխան նկարաքարտերի միջոցով։

Նկարները դասավորում եմ ըստ հաջորդական գործողությունների։ Ընթացքում դաստիարակում եմ նաև մաքրասիրություն, կարդում և պատմում եմ մաքուր և փնթի երեխաների մասին։ Ընթացքում ծանոթանում և ուղղորդում եմ մաքրության կանոնները՝ սնվելուց առաջ լվանալ ձեռքերը, ուտելուց հետո դարձյալ լվանալ և մաքրել ատամները։ Ինչպես նաև օճառով լվանալ ձեռքերը բակում գնդակով, պարանով, ավազով խաղալուց հետո։

Համապատասխան զրույցների, նկարների օգնությամբ երեխան ծանոթանում և պահպանում է հիգիենայի կանոնները։ Նկարների միաժամանակ ցուցադրմամբ պատմում եմ մաքրասեր տղայի մասին, որին բոլորը

սիրում են և ցանկանում են ընկերանալ, որն օրվա ընթացքում հաժախակի լվանում է ձեռքերը, ուստեկուց հետո՝ ատամները, օգտագործում է օճառ և միշտ մաքուր է և դրսում, և ներսում: Հակառակ պատմում եմ մեկ այլ երեխայի՝ աղջկա մասին, որը շատ փնթի է, անլվա ու կեղտոտ: Նա խուսափում է լվացվելուց ուտում է կեղտոտ, ձեռքերով որի պատճառով հաճախակի հիվանդանում է: Մյուս երեխաները զզվում են նրանից և խուսափում են նրա հետ խաղալուց: Ինքնուրույն հիգիենայի, մաքրության կանոնների պահպանման համար, որպես հիշեցում լվացարանի վերևում փակցրել եմ ձեռքերը լվացող երեխաների նկար: Հաճախ եմ հնարավորություն ստեղծում, որ երեխաները գիտակցեն ինքնուրույնության կարևորությունը և անհրաժեշտությունը: Դերային խաղերի միջոցով կատարեն ինքնուրույն գործողություններ:

Կատարեն իրենց զարգացման մակարդակին համապատասխան գործողություններ: Խրախուսում եմ երեխաներին նույնիսկ ամենաաննշան հաջողությունը, որի շնորհիվ երեխան ձեռք է բերում վստահություն սեփական ուժերի նկատմամբ, դառնում ավելի ինքնուրույն: Երեխաները ինքնուրույնություն են ձեռք բերում, ինքնադրսևորվում են նաև աշխատանքային պարզագույն հմտություններ ձեռք բերելու միջոցով: Կազմակերպում եմ դերային խաղեր <<Խոհանոց>>, <<Հիվանդանոց>>, ցուցադրում եմ տարբեր

մասնագիտություններ պատկերող նկար-քարտեր։ Աշխատում ենք բնության անկյունում երեխաները փոքրիկ բահերով փխրեցնում են բակի հողը, փոքրիկ դույլերով ջրում բույսերը։

Խոսքի զարգացման և գրականության պարապունքների միջոցով զարգանում է երեխաների ստեղծագործական կարողությունները, կազմակերպում եմ տիկնիկային փոքրիկ ներկայացում ըստ հեքիաթի թեմայի, որին մասնակից են դառնում սաները։ Երեխաները տիկնիկների միջոցով ներկայացնում են իրենց հույզերը, ցանկությունները, պարապունքները օգնում են երեխաներին վստահություն ներշնչել սեփական անձի նկատմամբ։ Ֆիզկուլտուրայի պարապմունքները նույնպես նպաստում են երեխաների նախաձեռնողականությունը։ Ըստ հրահանգի երեխաները արձագանքում են, մասնակցում շարժախաղերին, մրցույթային խաղերին։ Հանդես են բերում ակտիվություն և նախաձեռնող վարք՝ իրենց հնարավորությունների սահմանում։ Փոքրիկ քայլերի միջոցով սաների մեջ ձևավորվում է ինքնուրույնություն և ինքնավստահություն։ Ուշադրության կենտրոնում են բոլոր երեխաները։ Ինքնուրույնություն, ինքնավստահություն զարգանում է փոքր ենթախմբերով աշխատանքների կազմակերպման ընթացքում։ Սաները հնարավորություն են ստանում աշխատանքի ընթացքում համագործակցել, փոխանակել միմյանց գիտելիքները ու

փորձերը։ Աշխատանքի ընթացքում դառնում են ավելի ինքնավստահ։ Երեխաները պարապունքների ընթացքում ինքնադրսևորվում են զարգանում է երեխաների երևակայական միտքը։

Ինքնուրույն աշխատանքը օգնում է բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ինչպես գիտելիքների, հմտությունների և կարողությունների այնպես էլ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների կորողությունների զարգացման առումով։

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Խոսքի զարգացում

Թեմա՝ Ձմեռող թռչուններ

Տեսակը՝ Գեղարվեստական ընթերցանություն

Նպատակը՝ Ընդլայնել ձմեռող թռչունների վարքագծի վերաբերյալ երեխաների գիտելիքները, սովորեցնել լսել և հասկանալ գեղարվեստական ստեղծագործությունը։

Անհրաժեշտ նյութեր՝ Լ. Թարգյուլի <<Ծիտիկի երգը>> պատմվածքը և սյուժետային նկար՝ <<Ձմեռող թռչուններ>> թեմայով։

Ընթացք՝

Խթանման փուլ

Ձմեռող թռչուններ սյուժետային նկարը կախել երեխաների տեսադաշտում և նրանց ուշադրությունը հրավիրել նկարին։ Տալ թեմային համապատասխան հարցեր։ Օրինակ՝

-Տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարում։

-Ինչու՞ են կերակրամաններ պատրաստում երեխաները։

-Ի՞նչ են անում ճնճղուկները։

Կշռադատման փուլ՝

Յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո հարցերի միջոցով վեր հանել տվյալ հատվածի բովանդակությունը։

1-ին հատվածից հետո տրվող հարցեր.

-Ինչու՞ թռչունները ձմռանը ուտելու բան չեն գտնում

-Ինչու՞ են մրսում

-Ինչ են անում մարդիկ նրանց օգնելու համար։

2-րդ հատվածից հետո տրվող հարցեր.

-Ինչպե՞ս օգնեց Նունիկը ծիտիկին։

Վերջում ամփոփել <<Դուք ի՞նչ կանեք թռչուններին օգնելու համար>> հարցով։

Կիրառվող մեթոդներ

Նկարների ցուցադրում

Պատմում

Բացատրություն

Նկարագրում

Անհատական հարցում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը թույլ տվեց անել հետևյալ եզրակացություններ.

Մանկավարժական գործունեությունը պետք է պլանավորենք այնպես, որ առարկայի միջոցով առավելագույնի հասցնենք կրտսեր աշակերտների ստեղծագործական կարողությունների զարգացումը։

Սովորողների ստեղծագործական կարողությունները զարգացնելն առաջին հերթին նշանակում է ստեղծագործական վերաբերմունք մշակել աշխատանքի նկատմամբ։ Միևնույն ժամանակ, աշխատուժը համարվում է որպես ճանաչողական գործունեության ձևավորման աղբյուր, առաջադրանքին ինքնուրույն վերաբերմունք։ Աշխատանքի նկատմամբ ստեղծագործ վերաբերմունքը և աշխատանքի հանդեպ սիրո դաստիարակությունն է, և դրա առանձնահատկություններն իմանալու ցանկությունը, որն իր հերթին խթանում է իրենց ուժերը փորձել և հասնել հաջողության։

Սաների կողմից ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացումը կարող է կազմակերպել դաստիարակ կողմից հատուկ ստեղծված պայմաններում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մ. Մանուկյան

Կ. Չիբուխչյան